



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱ ՂԱՐԱԳՅՈՉՁՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանի 29.06.2017թ. դիմումի (մուտք № 1441-17) հիման վրա փաստաբան Արա Ղարագյոզյանի (արտոնագիր թիվ 2041) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

1. Դիմումի համառոտ բովանդակությունը և դիմողի պահանջը.

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ նաև՝ Պալատ**)՝ փաստաբան Արա Ղարագյոզյանի վարքագծի վերաբերյալ, հայտնել է հետևյալը. «Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 2017 թվականի հունիսի 28-ին դատարանի թիվ 1 դահլիճում դատական նիստից առաջ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի ծառայողները կանխել են ամբաստանյալների կողմից փաստաբան Ա.Ղարագյոզյանի միջոցով միմյանց ձեռագիր գրառումներով թուղթ փոխանցելու փորձը:»

Ոստիկանների կողմից վերցված թղթի վրա առկա են հետևյալ գրառումները.
«Դատավարությունն օգտագործում ենք.

1. Ժողովրդին (հարկապես՝ երիտասարդությանը) ոգևորելու
2. ինքնակազմակերպմանը օժանդակելու
3. մեր ազգային օրակարգը (Արցախի միացմամբ նոր Հանրապետություն, հեղու Կուր-Արաքսյան փարածքի վերահայացում)
4. մեր գաղափարները փարածելու
5. աշխարհին հասկացնելու, որ հայերին հնարավոր չէ ստրկացնել և մենք ազատվելու ենք գաղութատիրությունից
6. դատավարությունը շուռ փալու և վերածելու ռեժիմի մահավճոխի

7. լինելու կազմակերպված և պայքարը շարունակելու մինչև հաղթանակ
 8. հետևել մեր առողջությանը, այն միայն մերը չէ, նաև պայքարի համար է»:

Դատական նիստից հետո զանգվածային լրատվական միջոցներին տրված հարցազրույցում (<https://www.youtube.com/watch?v=NIXD2kGzjm4>) պաշտպան Արա Ղարազյոզյանը հայտարարել է. որ նշված թղթի վրա առկա գրառումները հանդիսանում են փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններ, որոնք հասցեագրված են եղել իրեն:

Ըստ Դիմողի՝ նշված տեքստի բովանդակությունից ակնհայտ է, որ դրա տարածումն ուղղված է գործի դատական քննությանը կազմակերպված կերպով խոչընդոտելուն, իսկ փաստաբանն իր հայտարարությամբ, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելով, փորձել է օրինականացնել նշված գործողությունները՝ իրավաբանական օգնություն ցույց տալու հետ որևէ առնչություն չունեցող փաստաթղթի բովանդակությունը ներկայացնելով որպես օրենքով պահպանվող փաստաբանական գաղտնիք:

Դիմողը գտել է, որ փաստաբանի կողմից օրենսդրությամբ վերապահված իրավունքներն ու դրանց ապահովման երաշխիքներն անբարեխղճորեն օգտագործվել են ակնհայտ հակաիրավական վարքագիծը քողարկելու նպատակով, ուստի խնդրել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլխում ամրագրված դրույթներին համապատասխան քննարկել նշված փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Դիմումին կից ներկայացվել է դիմումում նկարագրված գրառումները պարունակող ձեռագիր շարադրված թղթի պատճենը:

2. Փաստաբան Արա Ղարազյոզյանի համառոտ դիրքորոշումը.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն փաստաբան Արա Ղարազյոզյանին առաջարկվել է դատարանի դիմումի վերաբերյալ գրավոր բացատրություն ներկայացնել:

Փաստաբան Արա Ղարազյոզյանը 13.07.2017 թվականին ներկայացրած բացատրությամբ, մասնավորապես հայտնել է, որ «Արեգ Կյուրեղյանը դատական նիստից առաջ խնդրեց ինձ վերցնել ծալած նամակը և զգուշացրեց, որ այն փաստաբանական գաղտնիք է պարունակում: Ես վերցրեցի, սակայն ոստիկանը նամակը խլեց իմ ձեռքից: Ես չէի կարող գուշակել, թե նամակի բովանդակությունը պարունակում էր փաստաբանական գաղտնիք, թե՛ ոչ: Սակայն ես որևէ պատճառ և իրավունք չունեի և չունեմ չվստահելու իմ պաշտպանյալին, այդ իսկ պատճառով լրատվամիջոցներին նշել եմ, որ Արեգ Կյուրեղյանն ինձ փոխանցել է փաստաբանական գաղտնիք պարունակող նամակ: Նամակն իմ ներկայությամբ չի բացվել, հետևապես ես չէի կարող նամակի բովանդակությունն այլ կերպ որակել: ...»:

3. Պալատի եզրահանգումը և որոշումը.

Գտնում եմ, որ Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանի դիմումի հիման վրա (դիմումում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում) փաստաբան Արա Ղարազյոզյանի

նկարմամբ կարգապահական վարույթ հարուցելը պետք է մերժել՝ հերկյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Տվյալ դեպքում, որպես փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հիմնավորում, Դիմողը նշել է, որ ոստիկանության ծառայողները կանխել են ամբաստանյալների կողմից փաստաբան Ա.Ղարագյոզյանի միջոցով միմյանց ձեռագիր գրառումներով թուղթ փոխանցելու փորձը, որի բովանդակությունից հետևում է, որ դրա տարածումն ուղղված է գործի դատական քննությանը կազմակերպված կերպով խոչընդոտելուն: Մինչդեռ, փաստաբանն իր հայտարարությամբ, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելով, փորձել է օրինականացնել նշված գործողությունները իրավաբանական օգնություն ցույց տալու հետ որևէ առնչություն չունեցող փաստաթղթի բովանդակությունը ներկայացնելով որպես օրենքով պահպանվող փաստաբանական գաղտնիք: Վերոնշյալի հաշվառմամբ Դիմողը եզրահանգել է, որ փաստաբանի կողմից օրենսդրությամբ վերապահված իրավունքներն ու դրանց ապահովման երաշխիքներն անբարեխղճորեն օգտագործվել են ակնհայտ հակաիրավական վարքագիծը քողարկելու նպատակով:

Դիմումից և փաստաբանի բացատրությունից կարելի է եզրահանգել, որ տեղի է ունեցել հետևյալ երկու իրադարձություններից մեկը՝

1. փաստաբան Արա Ղարագյոզյանը չի ստացել ձեռագիր գրառումներով թուղթը և այն առգրավվել է Արեգ Կյուրեղյանից, կամ
2. փաստաբան Արա Ղարագյոզյանը Արեգ Կյուրեղյանից ստացել է ձեռագիր գրառումներով թուղթը և այն փաստացի առգրավվել է փաստաբանից:

Առաջին տարբերակի դեպքում, եթե փաստաբան Արա Ղարագյոզյանը չի ստացել իր պաշտպանյալ Արեգ Կյուրեղյանի կողմից ձեռագիր գրառումներով թուղթը, ապա չի կարող խոսք գնալ փաստաբանի վարքագծի մասին, իսկ ամբաստանյալ Արեգ Կյուրեղյանի վարքագիծը դուրս է Պալատի իրավական տեսադաշտից և չի կարող քննարկման առարկա դառնալ:

Երկրորդ տարբերակի դեպքում, եթե փաստաբան Արա Ղարագյոզյանը ստացել է իր պաշտպանյալ Արեգ Կյուրեղյանի կողմից ձեռագիր գրառումներով թուղթը, ապա ակնհայտ է, որ՝

- չկա որևէ կոնկրետ ապացույց, որից կարելի էր առերևույթ հետևություն կատարել, որ փաստաբան Արա Ղարագյոզյանն իմացել է այդ թղթի բովանդակության մասին.
- ձեռագիր գրառումներով թուղթն առգրավվել է փաստաբանից՝ ի խախտումն փաստաբանի գործունեության երաշխիքների:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ փաստաբանի մոտ կամ փաստաբանական կազմակերպության գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և տեղեկատվական կրիչները (համակարգիչները, տեսաձայնագրող սարքերը, լազերային սկավառակները, տեսաժապավենները և այլն) անձեռնմխելի են, չեն կարող առգրավվել (վերցվել) և չեն կարող որպես ապացույց օգտագործվել:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

Ոստիկանը կաշկանդված է օրինականության և կամայականության արգելքի սկզբունքներով («Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված), հետևաբար իրավունք չունի փաստաբանի մոտից առգրավել (հարկադրաբար վերցնել) տեղեկատվական բնույթի որևէ նյութ: Ոստիկանը նյութը հարկադրաբար վերցնելիս որևէ կերպ չէր կարող տեղյակ լինել դրա բովանդակությանը, հետևաբար և իրավաբանական օգնությանը վերաբերելիությանը: Ոստիկանը նման գործողությամբ փաստացի հնարավորություն կունենար ծանոթանալ նույնիսկ փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկատվությանը՝ ուղղակիորեն վնաս հասցնելով պաշտպանի և ամբաստանյալի շահերին:

ՀՀ փաստաբանների պալատը գտնում է, որ փաստաբանի մոտ գտնվող փաստաթղթերը և տեղեկատվական կրիչները (համակարգիչները, տեսաձայնագրող սարքերը, լազերային սկավառակները, տեսաժապավենները և այլն) անձեռնմխելի են, չեն կարող առգրավվել (վերցվել) և չեն կարող որպես ապացույց օգտագործվել, իսկ դրանց առգրավումը բոլոր դեպքերում պետք է անօրինական համարվի նույնիսկ այն դեպքում, երբ հետագայում պարզվի, որ առգրավված նյութն իրավաբանական օգնությանը չի վերաբերում:

Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ Դիմողը հրապարակել է իր դիմումը, գտնում են, որ՝

- Դիմողի կողմից մատնանշված հանգամանքները հիմք չեն կարող հանդիսանալ փաստաբան Ա.Ղարագյոզյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար, քանի որ առկա չէ կարգապահական վարույթ հարուցելու հիմքը.

- հարկ է դիմել ՀՀ ոստիկանության պետին՝ փաստաբան Արա Ղարագյոզյանից ձեռագիր գրառումներով թուղթն առգրաված ոստիկանի վարքագիծը քննարկելու համար.

- սույն որոշումը ենթակա է հրապարակման Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.4 հոդվածի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 12-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Արա Ղարագյոզյանի (արտոնագիր թիվ 2041) նկատմամբ

կարգապահական վարույթ հարուցելը մերժել՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

2. Դիմել ՀՀ ոստիկանության պետին՝ փաստաբան Արա Ղարազյոզյանից ձեռագիր գրառումներով թուղթն առգրաված ոստիկանի վարքագիծը քննարկելու համար:

3. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանին և փաստաբան Արա Ղարազյոզյանին, ինչպես նաև ապահովել սույն որոշման հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:

Ծանոթություն: Կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին սույն որոշումը շահագրգիռ անձը կարող է բողոքարկել դատական կարգով որոշումը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

17 հուլիսի 2017թ.
թիվ 194-Ա
ք. Երևան